ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
24 հունիսի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 5-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 60 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սուրեն Գրիգորյանը, Լևոն Հովհաննիսյանը և Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Արփենիկ Մուրադյանը, Սոնա Թևանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, բնապահպանության վարչության պետ Սիրարփի Հայկազյանը, տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը, լրատվության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Սիմոնյանը, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրեն Անետա Բաբայանը, Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի առաջին նիստը կգումարվի 2025 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 10.00-ին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ Արտակ Զեյնալյանն իր դիմումի համաձայն դադարեցրել է ավագանու անդամի իր լիազորությունները:

Համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 20-ի հ.21 արձանագրության՝ ավագանու անդամի մանդատը տրվել է Հանրապետություն կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Լինա Ղշյանին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2025 թվականի հունիսի 24-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 25 հարց, որից՝ 2-22-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գույքի նվիրատվության մասին: (Չզեկուցվող)
3. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N690-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
4. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց հ.24/1 հասցեում հասարակական նշանակության շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ի.Գասպարյանի փողոց հ.30 հասցեում ավտոհանգրվանի վերակառուցման՝ վերնահարկի իրականացման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
6. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 5-րդ նրբանցք հ.7/4 հասցեում հիդրոէլեկտրակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
8. Նորայր Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
9. Երևան քաղաքում Օֆելյա Համբարձումյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
10. Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց հ.15 շենքի հ.35/1 բնակարանն անհատույց օտարելու մասին: (Չզեկուցվող)
11. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ. 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
12. Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա ճանապարհահատվածի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

13. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շրջանային փողոց հ.7-11 հասցեում ավտոկայանատեղիի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
14. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշինի փողոց հ.37/54 հասցեում բենզալցակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
15. Երևան քաղաքի քաղաքային թափոնների կառավարման ծրագիրը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
16. «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
17. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
18. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)
19. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: **(«Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» հասարակական կազմակերպությանը**) (Չզեկուցվող)
20. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: **(«Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը)** (Չզեկուցվող)
21. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
22. Երևան քաղաքի ավագանու շահերը ներկայացնելու համար լիազորություններ վերապահելու մասին: (Չզեկուցվող)
23. «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2025-2028 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
24. 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2025 թվականը Երևանի նախկին թաղային համայնքներին և Երևան համայնքին պատկանած դպրոցների և մանկապարտեզների տարածքների օտարման գործընթացները ուսումնասիրող Երևան քաղաքի ավագանու քննող հանձնաժողով ստեղծելու մասին: (Զեկուցվող)
25. Արտակ Գալստյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին: (Զեկուցվող)

Ելույթով հանդես եկավ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և առաջարկեց օրակարգի չզեկուցվող 22-րդ՝ ««Երևան քաղաքի ավագանու շահերը ներկայացնելու համար լիազորություններ վերապահելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Առաջարկը դրվեց քվեարկության.
Կողմ՝ 23, դեմ՝ 32, ձեռնպահ՝ 4

Առաջարկը չընդունվեց:

Ելույթով հանդես եկավ ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյանը և առաջարկեց, հաշվի առնելով, որ գլխադասային իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն, օրակարգի զեկուցվող 25-րդ՝ «Արտակ Գալստյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» հարցը հանել օրակարգից:
Առաջարկը դրվեց քվեարկության.
Կողմ՝ 38, դեմ՝ 6, ձեռնպահ՝ 6

Առաջարկն ընդունվեց:

Ելույթով հանդես եկավ ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը և առաջարկեց օրակարգի չզեկուցվող 19-րդ՝ «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» **(«Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» հասարակական կազմակերպությանը**) և 20-րդ՝ «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» **(«Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը)** հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:
Առաջարկը դրվեց քվեարկության.
Կողմ՝ 23, դեմ՝ 30, ձեռնպահ՝ 7

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ քվեարկության է դրվում Երևանի ավագանու 2025 թվականի հունիսի 24-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գույքի նվիրատվության մասին: (Չզեկուցվող)
3. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N690-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
4. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց հ.24/1 հասցեում հասարակական նշանակության շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ի.Գասպարյանի փողոց հ.30 հասցեում ավտոհանգրվանի վերակառուցման՝ վերնահարկի իրականացման

նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)

6. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 5-րդ նրբանցք հ.7/4 հասցեում հիդրոէլեկտրակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
7. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)
8. Նորայր Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
9. Երևան քաղաքում Օֆելյա Համբարձումյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
10. Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց հ.15 շենքի հ.35/1 բնակարանն անհատույց օտարելու մասին: (Զեկուցվող)
11. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ. 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
12. Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա ճանապարհահատվածի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
13. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շրջանային փողոց հ.7-11 հասցեում ավտոկայանատեղիի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
14. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշինի փողոց հ.37/54 հասցեում բենզալցակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
15. Երևան քաղաքի քաղաքային թափոնների կառավարման ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
16. «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
17. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)
18. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)
19. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: **(«Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» հասարակական կազմակերպությանը**) (Զեկուցվող)
20. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին: **(«Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը)** (Զեկուցվող)

21. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
22. Երևան քաղաքի ավագանու շահերը ներկայացնելու համար լիազորություններ վերապահելու մասին: (Չզեկուցվող)
23. «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2025-2028 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
24. 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2025 թվականը Երևանի նախկին թաղային համայնքներին և Երևան համայնքին պատկանած դպրոցների և մանկապարտեզների տարածքների օտարման գործընթացները ուսումնասիրող Երևան քաղաքի ավագանու քննող հանձնաժողով ստեղծելու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 22, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը պարզաբանումներ ներկայացրեց օրակարգի նախագծի 19-րդ՝ «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» **(«Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» հասարակական կազմակերպությանը**) և 20-րդ՝ «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» **(«Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը)** հարցերի վերաբերյալ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 22-րդ հարցերը:

Տ.Ավինյանը տեղեկացրեց, որ չզեկուցվող հարցերի վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովների կողմից տրվել են դրական եզրակացություններ:

2. Գույքի նվիրատվության մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի բյուջեի «Տրանսպորտային համակարգի արդիականացում» ծրագրով 2020 թվականին ձեռք բերված 1,825,000,000.0 (մեկ միլիարդ ութ հարյուր քսանհինգ միլիոն դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 100 հատ ԳԱԶ A68R52 մակնիշի ավտոբուսները, 2021 թվականին ձեռք բերված

7,199,920,000.0 (յոթ միլիարդ մեկ հարյուր իննսունինը միլիոն ինը հարյուր քսան հազար դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 161 հատ ZHONGTONG BUS, LCK6860HGN մակնիշի ավտոբուսները և 2021 թվականին ձեռք բերված 2,236,000,000.0 (երկու միլիարդ երկու հարյուր երեսունվեց միլիոն դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 50 հատ ZHONGTONG BUS, LCK6860HGN մակնիշի ավտոբուսները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրերի և հանձնման-ընդունման ակտերի կնքումը:

3. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N690-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու կարգը սահմանելու մասին» N 690-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «որոնք անշարժ գույքի հարկով և (կամ) փոխադրամիջոցի գույքահարկով հարկման օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունը և (կամ) փոխադրամիջոցը ձեռք են բերել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը,» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց h.24/1 հասցեում հասարակական նշանակության շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «ԷԿՈ ՏՈՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մոնթե Մելքոնյան փողոց h. 24/1 հասցեում հասարակական նշանակության շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

5.Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ի.Գասպարյանի փողոց հ.30 հասցեում ավտոհանգրվանի վերակառուցման՝ վերնահարկի իրականացման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ի.Գասպարյան փողոց հ. 30 հասցեում ավտոհանգրվանի վերակառուցման՝ վերնահարկի իրականացման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

6. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 5-րդ նրբանցք հ.7/4 հասցեում հիդրոէլեկտրակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 5-րդ նրբանցք հ. 7/4 հասցեում հիդրոէլեկտրակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

7. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 268-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 268-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

8.Նորայր Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն հայ երգիչ, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Նորայր Մնացականյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կոմիտասի պողոտայի հ. 63 հասցեում փակցնելու համար:

9. Երևան քաղաքում Օֆելյա Համբարձումյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի «Կաղնուտ» այգուն հարակից, Փիրումյաններ փողոցին զուգահեռ, ճանապարհահատվածն (սկսվում է Տիգրան Պետրոսյան փողոցից, հասնում՝ 6/7 հասցեի հարակից տարածք) անվանակոչել հայ երգչուհի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհի Օֆելյա Համբարձումյանի անվամբ՝ «Օֆելյա Համբարձումյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

10.Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց հ.15 շենքի հ.35/1 բնակարանն անհատույց օտարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Անդրանիկի փողոց հ.15 շենքի հ.35/1 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով օտարել (նվիրել) Անի Սամվելի Բազինյանին և Աննա Աթաբեկի Հարությունյանին:

11. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ. 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Վիկտոր Տեր-Հովսեփյանի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Անտառային փողոց հ. 108/1, 108/2, 116, 116/3, 112/2 հասցեներում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

12. Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա ճանապարհահատվածի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա ճանապարհահատվածի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

13. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շրջանային փողոց հ.7-11 հասցեում ավտոկայանատեղիի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շրջանային փողոց հ.7-11 հասցեում ավտոկայանատեղիի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

14. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշինի փողոց հ.37/54 հասցեում բենզալցակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Արթուր Հարությունյանի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշինի փողոց հ. 37/54 հասցեում բենզալցակայանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

15. Երևան քաղաքի քաղաքային թափոնների կառավարման ծրագիրը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան քաղաքի քաղաքային թափոնների կառավարման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

16. «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հաստատել «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

17. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Համաձայնություն տալ Սանասար Բեգլարյանին սեփականության իրավունքով պատկանող Մ.Մելքոնյան փողոցի հ.50/3 հասցեում՝ տարածագնահատման 5-րդ գոտում, գտնվող 303.54 քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18042022-01-0271 վկայական), Մ.Մելքոնյան փողոցի հ.50/3 հասցեին կից Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 303.54 քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

18. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – **1.**Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 259-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլխի աղյուսակը լրացնել նոր՝ 43-46-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

19. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.12.2021թ. հ.09122021-01-0408 /գաղտնաբառ՝ WTJRDWGMWFBF/ վկայական) Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի, 4-րդ հարկի, 16.53քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2028 թվականի օգոստոսի 1-ը ժամկետով տրամադրել «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» հասարակական կազմակերպությանը:

20. Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.12.2021թ. հ.09122021-01-0408 /գաղտնաբառ՝ WTJRDWGMWFBF/ վկայական) Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի, 1-ին և 2-րդ հարկերի, ընդհանուր 245.23քմ մակերեսով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2028 թվականի օգոստոսի 1-ը ժամկետով տրամադրել «Սիմֆոնիկ Ա» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը:

21. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «3. Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր» գլխի «3.6. Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» ենթագլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3.6	**Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ**				
1	վարչական շրջանի ղեկավար	1	850,000		850,000
2	վարչական շրջանի ղեկավարի օգնական	1	323,000		323,000
3	վարչական շրջանի ղեկավարի տեղակալ	2	714,000		1,428,000
4	աշխատակազմի քարտուղար	1	697,000		697,000
5	գլխավոր մասնագետ-իրավաբան	1	323,000		323,000
6	գլխավոր մասնագետ	1	323,000		323,000
7	գլխավոր մասնագետ-մարդկային ռեսուրսների կառավարման գծով	1	289,000		289,000
8	առաջատար մասնագետ	1	289,000		289,000
9	առաջատար մասնագետ-հասարակայնության հետ կապերի պատասխանատու	1	282,200		282,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	**10.0**			**4,804,200**
-	**Առևտրի և ծառայությունների բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	բաժնի պետի տեղակալ	1	326,400		326,400
3	գլխավոր մասնագետ	4	289,000		1,156,000

4	առաջատար մասնագետ	8	282,200		2,257,600
5	առաջին կարգի մասնագետ	9	272,000		2,448,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**23.0**			**6,575,600**
-	**Գովազդի բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
3	առաջատար մասնագետ	5	282,200		1,411,000
4	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**10.0**			**2,920,600**
-	**Եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	բաժնի պետի տեղակալ	1	326,400		326,400
3	գլխավոր մասնագետ	6	289,000		1,734,000
4	առաջատար մասնագետ	10	282,200		2,822,000
5	առաջին կարգի մասնագետ	10	272,000		2,720,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**28.0**			**7,990,000**
-	**Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող	5	289,000		1,445,000
3	գլխավոր մասնագետ-հոգեբան	1	289,000		289,000
4	առաջատար մասնագետ	1	282,200		282,200
5	առաջին կարգի մասնագետ	1	272,000		272,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**9.0**			**2,675,800**
-	**Ընդհանուր բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
3	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
4	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**7.0**			**2,074,000**
-	**Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	բաժնի պետի տեղակալ	1	326,400		326,400
3	գլխավոր մասնագետ	7	289,000		2,023,000
4	առաջատար մասնագետ	10	282,200		2,822,000
5	առաջին կարգի մասնագետ	10	272,000		2,720,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**29.0**			**8,279,000**
-	**Կրթության, մշակույթի և սպորտի բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	գլխավոր մասնագետ	3	289,000		867,000
3	առաջատար մասնագետ	4	282,200		1,128,800
	ԸՆԴԱՄԵՆԸ	**8.0**			**2,383,400**
-	**Տեխնիկական սպասարկման անձնակազմ**				
1	տնտեսվար	1	370,600		370,600
2	Տեխնիկական աշխատող-աշխատանքների ղեկավար	2	272,000		544,000

3	պարետ	1	241,400		241,400
4	համակարգչային տեխնիկայի օպերատոր-գործավար	1	258,400		258,400
5	համակարգչային տեխնիկայի օպերատոր-գործավար	3	210,800		632,400
6	համակարգչային տեխնիկայի սպասարկող	1	210,800		210,800
7	վարորդ	1	265,200		265,200
8	վարորդ	2	255,000		510,000
9	պահակ	4	176,800		707,200
10	բանվոր	2	176,800		353,600
11	տեխնիկական աշխատող	49	200,000		9,800,000
12	հավաքարար	6	176,800		1,060,800
	ԸՆԴԱՄԵՆԸ	**73.0**			**14,954,400**
-	**Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	բաժնի պետի տեղակալ	1	326,400		326,400
3	գլխավոր մասնագետ	2	289,000		578,000
4	առաջատար մասնագետ	2	282,200		564,400
5	առաջին կարգի մասնագետ	3	272,000		816,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**9.0**			**2,672,400**
-	**Ֆինանսական բաժին**				
1	բաժնի պետ	1	387,600		387,600
2	գլխավոր մասնագետ	3	289,000		867,000
3	առաջատար մասնագետ	3	282,200		846,600
4	առաջին կարգի մասնագետ	2	272,000		544,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**9.0**			**2,645,200**
	ԱՄԲՈՂՋԸ	**215.0**			**57,974,600**

».

2) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ վարչական շրջաններ» տողում «1459.0» և «407,931,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «1476.0» և «411,475,600» թվերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1529.0» և «429,919,400» թվերը՝ համապատասխանաբար «1546.0» և «433,463,400» թվերով.

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2317.0» և «693,395,245» թվերը փոխարինել համապատասխանաբար «2334.0» և «696,939,245» թվերով:

22. Երևան քաղաքի ավագանու շահերը ներկայացնելու համար լիազորություններ վերապահելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու շահերը ներկայացնելու համար լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության ստորև նշված աշխատակիցներին լինելու Երևան քաղաքի ավագանու ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության վարչական, Հայաստանի Հանրապետության

վերաքննիչ վարչական դատարաններում և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատում, կատարելու Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով նշված բոլոր դատավարական գործողությունները.

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյան.

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Արամ Մարտիրոսյան.

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետ Զավեն Սմբատյան.

4) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի պետ Ելիզավետա Արզիկյան.

5) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի գլխավոր մասնագետ Լիլիթ Նարիմանյան.

6) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի գլխավոր մասնագետ Լաուրա Հարությունյան.

7) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի առաջատար մասնագետ Սյուզաննա Արմենակյան.

8) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի առաջատար մասնագետ Սևակ Բարսեղյան.

9) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական գործերի վարման բաժնի առաջին կարգի մասնագետ Նադեժդա Մուրադյան.

10) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Լուսինե Խաչատրյան:

2. Լիազորագիրը տրվում է մեկ տարի ժամկետով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 14, ձեռնպահ՝ 8

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2025 թվականի հունիսի 24-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

23. «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2025-2028 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ իրավական հարցերի մշտական

հանձնաժողովի կողմից ««Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2025-2028 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրեն Անետա Բաբայանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 6 անդամ.

1. Տիգրան Պետրոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
3. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
4. Վահան Ավագյան – Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար
5. Արամ Թորոսյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
6. Հայկ Միրզոյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրեն Անետա Բաբայանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

1. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Գրիգոր Իսկանդարյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Սամվել Հակոբյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2025-2028 թվականների գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 13

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

24. 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2025 թվականը Երևանի նախկին թաղային համայնքներին և Երևան համայնքին պատկանած դպրոցների և մանկապարտեզների տարածքների օտարման գործընթացներն ուսումնասիրող Երևան քաղաքի ավագանու քննող հանձնաժողով ստեղծելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2025 թվականը Երևանի նախկին թաղային համայնքներին և Երևան համայնքին պատկանած դպրոցների և մանկապարտեզների տարածքների օտարման գործընթացները ուսումնասիրող Երևան քաղաքի ավագանու քննող հանձնաժողով ստեղծելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 9 անդամ.

1. Պեդրո Զարոկյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Արման Բաբաջանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
3. Արշակ Սարգսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Հայկ Գրիգորյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
5. Արմենակ Դանիելյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
6. Ալբերտ Մովսիսյան – Երևան քաղաքի ավագանու անդամ
7. Գրիգոր Իսկանդարյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
8. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
9. Աննա Ավետիսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ:

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը, Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել է ավագանու 15 անդամ.

1. Միքայել Խաչատրյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
2. Սամվել Հակոբյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
3. Արշակ Սարգսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
4. Պեդրո Զարոկյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
5. Նատալյա Սինորյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
6. Գրիգոր Իսկանդարյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
7. Անի Խաչատրյան – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության ղեկավար
8. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար
9. Սուսաննա Մելիքյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
10. Արմենակ Դանիելյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
11. Լուսինե Սարգսյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
12. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
13. Լևոն Լևոնյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
14. Արմեն Քոչարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
15. Հայկ Միրզոյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ խմբակցությունների անունից չհերթագրված, արտահերթ մեկական ելույթով հանդես եկան՝ Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյանը, Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը, Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ Հայկ Սահակյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 16

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց
Լ. Ալոյան